

եկեղեցեաց, բայց նաեւ առանձնական ընդարձակ հողերը, տալով Եւնիչէրիններու եւ այլոց, որոնք մէկ մէկ բէկ ու բռնապետ կ'ըլային զիւզիրուն վրայ: Բռնի մահմետականացման զլխաւոր ազգականերէն մին էր այս:

Այսօր իրերը մասամբ փոխուած են անով որ Բաբերդ ու Սպեր մասնակցած են Կալնոյ նահանգին այն մեծ գաղթականութեան, որ տեղի ունեցաւ 1828 ի ռուսթրքական պատերազմէն ետքը, (Ռուսք առին Բաբերդն ալ, բերդը կործանեցին,) զիմեւով զէպի Ախալցխա եւն: Գաղթին առաջնորդն էր Կալնոյ Կարապետ եպիսկոպոսը, որ հայրենեօք էր Հունուացի: Սպերի այս մեծ ձորը՝ Հունուտ՝ այսուհետեւ մեծամանու թեամբ մահմետական եղած է. բայց գոնէ մնացած է հայ հասարակութիւն մ'ալ բաւական թուով, թէեւ փոքր՝ համեմատութեամբ մահմետականացածներուն: Բաբերդի գաւառը հողագործութեան յարմար ըլլալով՝ թուրք կառավարութիւնը հոն զեռեղած է զիտմամբ մաս մը Կովկասէ եկած գաղթականաց, որոնց շատը 1878 ի պատերազմէն ետքը Ռուսաց ձեռքը մնացած Կարսի շրջանէն են: Բաբերդի մահմետականաց մէկ